



5/116  
1913  
43

ՄԻՍԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

# ՎԵՏԻ ՑՈՂԵՐ

Ուսանաւոր եւ արձակ բանաստեղծութիւններ.

«Քար կը սեղմեմ սրտիս հիմա,  
Կելնեմ սարերը լալու,—  
Ա՛խ, կուզես լաց, կուզես սգայ,  
Անցածն էլ յետ չի գալու):  
(Աւ. Իս.)



Վաղարշապատ

Յիսթորիանիտ տպարան Մ Աթոռոյ Ս. Էջմիածնի

1913

891.99  
Z-85

ՄԻՍՍԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

# ՎԵՏԻ ՅՈՂԵՐ

ՈՏԱՆԱՐ ԵՎ ԽՐՃԱԿ ԲԱՆԱՍԵԿԺՈՒՐԻՆԵՐ.

«Քար կը սեղմեմ սրտիս հիմա,  
Պէլնեմ սարերը լալու,—  
Ա՛խ, կուգես լաց, կուգես սգայ,  
Անցածն էլ յետ չի գալու):  
(Աւ. Իս.)

Վաղարշապատ

Ներքարաշարժ տպարան Մ. Աթոռյ Ս. Էջմիածնի  
1913

13 JUN 2013

28315

11355-57



(11355-57)

25816-60

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐ

Առաջին էր ամառնային սիրուն առաջին:  
Արեգակը վաղուց արդեն դուրս էր եկել և իր  
կենսատու ճառագայթները սփռել երկրի վրայ:

Բանուր գիւղացիք, ինչպէս կռուկի երամ-  
ներ, վաստակի երգեր երգելով, ճանապարհ ըն-  
կած հանդ էին դուրս գալիս աշխատելու:

Նախիրը արդէն տարածուել էր հանդի մէջ:  
Ոչխարների մայիւնը, թռչունների ուրախ ծլուրցը,  
այս բոլորը միախառնուելով իրար լի քառային  
դրութիւն էր ներկայացնում:

Բնութեան այդ ուրախ ժամանակն էր, երբ  
ես և ընկերս կանգնած էջմիածնի հրապա-  
րակում կառքի էինք սպասում քաղաք գնալու:  
Երբ մենք յայտնեցիք մեր քաղաք գնալու մտա-  
դրութիւնը, ամեն կողմից տասնեակներով կառ-  
քեր շարեցին մեր շուրջը, ամեն կողմից հրա-  
ւիրելով մեզ: Վերջապէս մենք ընտրեցինք մի  
կառք և պատրաստ էինք գնալու, երբ կառապանը  
մտադրութիւն յայտնեց, որ էլի ուզում է մարդ

վերցնի, որի համար և հարկաւոր է մի քանի բողոք ստանալ:

Բարեբախտաբար երկար չեղաւ այդ սպասումը, մի ալեւոր ծերունի մօտեցաւ մեզ և յայտնեց, որ ինքն ևս ցանկանում է գնալ քաղաք:

Կառապանը սիրով ընդունեց նրան և նստեցրեց կառքի պատուաւոր մասում: Կառքը շարժուեց. օգի մէջ լսուեցին ձիերի դոխիւններ և կառքը առաջ ընթացաւ:

Ճանապարհին իմ ամբողջ ուշադրութիւնը գրաւեց ծերունին, որ նստած էր կառքում, ձեռքերը գլխի տակ յենած խորհում էր ինչ որ բանի մասին. մերթ հոգու խորքից յոգոցներ էր հանում, մերթ աչքերը տրորում և շոգ եղանակից դժգոհութեան նշաններ յայտնում:

Կառքը սլանում էր... Կառապանը մերթ ուժգին մտրակում էր ձիերին, մերթ երգում.

«Սիրեցի հարբա տարան,

Նարայ տւին ու տարան,

էս ինչ գուլում աշխարհէ

Պոկեցին սիրտս տարան»:

Ծերունու դէմքը սկսեց աւելի և աւելի կընճռուակել, ու կրծքից մի խոր յոգոց հանելով դարձաւ կառապանին:

— Այդ ինչ ևս երգում, որդիակ, մըմնաց

ծերուկը. միթէ ուզում ես սրտիս տակ կուտակւած ցանկերը նորից դարձեցնել. ո՛հ, դու տնողոք ես...

Կառապանը շանթահարի պէս վեր թռաւ ծերունուց այս անսպասելի խօսքերը լսելով:

— Պատմիր, պապի, ինչ որ ասացիր, այդ ի՞նչ խորունկ վիշտ է, որ թաղւած է քո սրտում. միթէ երգը կարող է մարդուս վատ լինել... Այդ հին երգ է և բոլորն են երգում, ես էլ երգեցի... ոչինչ, մի քիչ ողորդւած էի...

— Ես... ես... կամիաց ծերուկը հենց այնպէս... յիշեցի... ախ... յիշեցի նրան... նրան... Ծերունու խօսքերը իմ մէջ անստելի հետաքրքրութիւն դարձնեցրին ևս հարցրի. — Պապի ջան, պապի, խնդրում եմ պատմես. ես զգում եմ մի ցաւ իմ սրտի խորքում, երբ տեսնում եմ ձեր դունատ ճակատը: Կարծես բնազդը ինձ ասելու լինի, որ դու մեծ ցաւ ունիս, պատմիր: Ես շատ եմ ցանկանում լսել արկածներ, մանաւանդ վշտալից բաներ. դէհ, պատմիր, խնդրեմ... — Ե՛հ, որդի, թէպէտ ջահել ես, շատ կյուղեւս, երբ քո առաջ պատկերանայ իմ վշտի աղբիւրը և նրա խորութիւնը — բայց ինչ արած, պատմել է պէտք, երևում է, որ քո հետաքրքրութեան մերժումը վատ հետևանք կունենայ:

— Ես Փ. քաղաքից եմ գալիս և կրկին գնում եմ այնտեղ:

Դործով եկել էի Օշական, բայց իմ յոյսերս...  
ի դերե ելան, յոյս ունէի որ այնտեղ կգտնեմ...

Այստեղ ծերուկը կրկին գլուխը ձեռքերի  
մէջ առաւ և սկսեց խորհել. այլևս նա չէր խո-  
սում, այլ լալիս էր ու երգում:

«Որսկան աղբէր, սարէն կուգաս,  
Սարի մարալ կը փնտրես,  
Աստ. ետրաբ դու չտեսար  
Իմ մարալիս, իմ բալիս»...

Պապի ջան, պապի, կրկին թախանձեցի ես,  
շարունակիւր խնդրեմ, թվէ արդեօք այդ մարալը:

— Որդեակ, մարալը, եղջերուն, իմ հոգուս  
հատոր որդեակը դարդի ձեռքից սարերն ընկաւ...

Նետը սրտում, արտասուները աչքերում վաղ-  
վղում է սարից սար, քարափից քարափ և ամ-  
բողջ բնութիւնը իր ամենի ցաւով լացեցնում...  
Եղջերուն թառնում բալէս, թվէ իմանում, որ քարի  
վրայ գլուխը դրեց և ընկաւ արնաքամ... Իմ  
որդիս էր նա, իմ աչքիս լոյսը, իսկ այժմ իմ նե-  
տով սպանւած եղջերուն... կմկմաց ծերուկը և  
կրկին լսեց:

Իմ հետաքրքրութեանս չափ չկար: Ծերու-  
նին շարունակեց. — Տասնութինգ երկար ու ձիգ  
տարիներէ որ շրջում եմ այսպէս: Ես ունէի մի  
որդի՝ Եղօ էր անունը:

Նա դեռ 18 տարին չէր լրացրել և դեռ դըպ-  
րոցական կեանքում սիրահարեց Բաղդօ անունով  
մի մարդու աղջկայ վրայ:

Աղքատ էր Բաղդօն, շատ ընտանիք ունէր և  
շատ քիչ աշխատանքի աղբիւր: Թւով չորս աղջիկ  
ունէր, սրանցից ամենամեծը Սարանն էր, տեսքով  
բաւականին սիրուն, բայց արտաքինով աղքատի  
գրութեան մէջ: Նա մարդկանց գրաւում էր իր  
դէմքի հեղութեամբ և խոնարհ վերաբերմունք ունէր  
դէպի ամեն մի մարդ՝ լինէր ծանօթ, թէ ան-  
ծանօթ: Յաճախ էր պատահում, որ Եղօն ներս  
էր մտնում և հե ի հե կանչում «Հայրիկ, ես սի-  
րում եմ Սարանին, նա լաւ աղջիկ է, ձեռքիցս  
կըթռչի, մի թողնիր: Բայց ես ամեն անգամ նրան  
մերժում էի, նոյն իսկ ապտակում, որ նա հա-  
մարձակւում էր այդպէս կանուխ սիրահարել, այն  
էլ աղքատ աղջկայ վրայ:

Վերջապէս, տեսնելով որդուս միահամուռ  
թախանձանքները, վճռեցի նրան ամուսնացնել  
մեր հարեան Սօջա Գօրօրի աղջկայ հետ, որը  
վաղուց հոշակուած էր իր հարստութեամբ,  
բայց ինչ արած, որ նրա աղջիկը մի քիչ տգեղ  
էր և անդուրեկան:

Ինչ արի չարի, որդիս ինձ չը լսեց ստիպ-  
ւած եղայ բռնութեամբ առաջ տանել իմ հրա-  
մանը:

Մինչ այս, մինչ այն Սարանին արդէն մարդու տարան, իսկ իմ որդիս սկսեց գիշեր ցերեկ անքուն թափառել այս ու այն կողմ. գիշերները (սխ վերան լինէր այդ գիշերները) քնում էր փողոցներում ցրտի և արևի տակ կամ Սարանին պատի տակ կուշ կկած:

Ես այդ նկատում էի, զիմում էի բռնութեան: սակայն ինձ չէր լսում, և յամառութեամբ նոյն դիրքը բռնած՝ տանջւում էր սիրոյ ճանկերում, համ տանջւում:

Վերջապէս, ճարս կտրուեց, կանչեցի տուն... Տէր Աստուած, ինչ ճիպոտներ էր, որ մէջքին ջարդում էի, ապտակներ էր, որ հասցնում էի այտերին, վերջապէս վիր գցեցի գետին, ախանջները ամուր քաշեցի ասելով. «վերջ կըտաս քո յամառութեանը, թէ ոչ» Եղօն գլուխը սոսկալի ցաւի տակ բարձրացրել էր և չգիտէր ինչ ասի: Այդ ժամանակ չգիտեմ, որտեղից վրայ թռաւ նրա մայրը, խլեց ձեռքիցս և տարաւ ուրիշ սենեակ, սրբեց արտասուալից աչքերը, թափ տեղի փոշուտած շորերը և նրա սիրտը հանգստացրեց ասելով «Դու մի վախիր, Եղօ ջան, քեզ էնպէս աղջիկ է ուղեկ հայրդ, որ աշխարհում առաջինն է, հողիմ Սարանի գլուխը, նա ինչ աղջիկ է, որ նրան նուիրում ես, հանգստացիր, որդեակ, թէ չէ՝ հայրդ կոպիտ է, շատ կը բարկանայ:

Մինչդեռ մայրը հանգստացնում էր որդուն, կրկին յարձակեցի նրա վրայ և զոռացի. «փուշ զաւակ, նստիր տանը, այսուհետեւ չգնաս փողոց, թէ չէ գլուխդ ջարդ ու փշուր կանեմ... անիծած... դու համարձակում ես չհնազանդել հայրական պատէշներին»: «Հայրիկ, հայրիկ, կըմկմաց Եղօն և կրկին լուեց գլուխը կտի գցեց:

Նա արտասուում էր դառնապէս մինչև չորս օր. և մնաց այդ դառն արտասուքների ծովում:

Վերջապէս հինգերորդ գիշերը մեղանից ծածուկ վիր էր կացել ու նետուել օտար հորիզոնների տակ՝ պանդխտութեան գիրկը. ես ես... լաց ու կոծով, ծով ու աղօթքով սպասում էի նրա գալստեանը, բայց նա չկա՛յ ու չկա՛յ: — Ո՛հ քանի՛ քանի՛ համակներ ստացայ «Հայր, մեռնում եմ, եկ, երեսս վերջին անգամ տես և բալիդ, քո մորթած բալիդ երեսին մի բուռը հող ձգիր»: Անխնա, կարծես ինձ ցաւի և վշտի տակ կորցնելու համար էր դրում այս բոլորը: Գնում էի մեռնելու վայրը, բայց նա այնտեղ չէր և ոչ մի շշուշ անգամ չէր լսում նրա մասին....

Բայց այդ տեղի ընդամենը մի տարի: Իսկ այնուհետեւ ահա տաննէն տարի է, որ այդպիսի շշուշ անգամ չեմ լսում և ոչ մի նամակ չեմ ստանում:

Վերկացայ, էս ծերութեանս օրերում ինչ

որ ունէի, չունէի, ծախեցի և գնացի նրան անձամբ  
փնտրելու:

Երեք չորս հազար բուրլի ծախսեցի բայց ա-  
պարդիւն: Տասնեւինգ ամբողջ երկար ու ձիգ տա-  
րիներ է, որ այսպէս շրջում եմ անաւոր վշտի բեռը  
շալակիս, որ ճնշում է դալուկ մարմնիս, կողոպտում  
սիրտս ու հոգիս, աչքերիս արտասուէնքը ցամա-  
քեցնում:

— Գիշերները, որտեղ քնում եմ, իմ առաջ  
պատկերանում է իմ որդուս նիհար և վտիտ մար-  
մինը՝ միշտ նոյն արտասուէնքը աչքերին աղեր-  
սում է ինձ և կրկին աղաւնու պէս թռչում ան-  
յայտանում: Ա՛խ, դարիբի տէրը մեռնի... Մեռնեմ  
պըծնեմ էս վերան աշխարհից, որ այլևս էլ չը  
տեսնեմ արևի լոյսը: Բայց աւանդ, իմ թառվանն  
անհուն կարօտով յետ կդառնայ հայրենիք իր  
հայրենական տունը տեսնելու, բայց ես մեռած  
կը լինիմ... չէ՛ որ այդ կախաղան հանելուց էլ  
վատթար է:

Բայց ո՛չ ո՛չ, միայն ապրել, շրջել գիւղից  
գիւղ, քաղաքից քաղաք, գտնել նրան, մի անհուն  
ժպիտով համբուրել նրա կարօտալից ճակատը ու  
մեռնել, մեռնել յաւիտեան:


Ո՛հ, չէ որ երբն ասում է՝ «Սարի մարմանդ  
հոգն է փչում, վառ ճակատին մարալիդ, ծա-  
ղիկներն են վրան սգում քո մարալիդ, քո բալիդ»:

Ո՛հ, ո՛չ այդ սուտ է, իմ մարալը դեռ չի  
ընկել արնաքամ, նա ապրում է...

Վերջին խօսքերի ժամանակ նրա ձայնը  
կերկրաց, գլուխը կախ ձգեց և սկսեց հեկեկալ:  
Նրա արտասուէնքները մեղմ ցոլացին սպիտակ այ-  
տերի տակից և ողողեցին գունատ թշերը:  
Այլևս նա չէր խօսում, չէր պատմում, այլ լալիս  
էր ու լալիս:

Իմ յուզմունքին չափ չկար, և ոչ մի խօսք  
չէր գալիս բերանս մի որևէ մխիթարական խօսք  
ուղղելու ձերուկին:

Կառքը սլանում էր արագութեամբ: Ա-  
նիւնները կարծես տնքում էին այս անուշիկ ցաւի  
կոյտի տակ և կառքը զորդիւնով սլանում էր,  
հա՛ սլանում: Մենք հասնում էինք քաղաքին:



Նիէր Հին

—Ոհ՛ որքան ուրախ տեսայ քեզ այսօր,  
իմ առնջած հոգի,  
Ո՛րքան ցնծալից տեսայ ես նրան...  
հա չէ՛ ոչ ոքի:

Վերջապէս ես էլ մի վարդ քաղեցի,  
երգեր հիւսեցի,  
Այրուղ ճակատից համրոյր քաղեցի,  
ցաւս թաղեցի:

Ե՛ս էլ ուղեցի քո գէմքը շոյիլ,  
փարւել, միանալ  
Ուղեցի ապրել, քեզ համար ապրել  
և ինձ մոռամբալ:

\* \*

Քայլում եմ ես միշտ, քայլում անընդհատ  
Վշտի ահաւոր շերտը կրծքիս տակ.  
Եւ ինձ տանջում է միտքս ահաւոր,  
Երգեր ու վէրքեր ցաւս անյատար:

Ա՛խ, ուր գնում եմ, սէրն ինձ չի ժպտում,  
Գնում եմ գնում հեռու ճամփաներ.  
Անիրաւ աղջիկ, է՛ր ես ինձ գերում,  
Ինչո՞ւ դուք անցան երազ, խոստումներ:

Քայլում եմ, քայլում, քայլում անընդհատ,  
Առջև է ըացւում անծայր ուղիներ  
Եւ արցունքներս հոսում են հատ հատ  
Ու անվերջ թրջում անսէր ուղիներ:

\* \*

Երազ կեանքով ես ապրեցի,  
Կեանքում ոչինչ չտեսայ,  
Միայն մի վարդ ես սիրեցի,  
Բայց նրա տեղ փուշ տեսայ:

Դալով ու լուռ ճամբայ ընկայ  
Դէպի մահու գերեզման.  
Դալուկ ու լուռ գետին ընկայ,  
Սէրս մարեց յաւիտեան:

\* \*

Սիրտս խոցւած արիւնոտ,  
Հոգիս մռայլ ու տխուր,  
Միայն ստէպ սլանում է,  
Բայց չգիտեմ գէպի ո՞ւր...

Ձկար մի դեղ, որ բժշկէր

ցաւս բիւր

Միայն մի բան արդեօք ինչ էր

սիրոյ համոյր...

\* \*

Սիրուն աղջիկ բարձր սարուն

էն ինչ ծովն է միալար

Բարձրանում է հա բարձրանում,

Սակայն կրակն է անմար:

—Սիրուն տղայ, սիրոյ բոցն է

էն սարերում վառվում,

Տարիների սրտիդ խոցն է,

Տանջում է քեզ, չի մարում

—Սիրուն աղջիկ, չէ՞ որ կայրւիմ

Անմար ու խուլ հնոցում

—Շատերը կան, մենակ դու չես

Որ կայրւին էն բոցում:

ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ...

Սիրել, ափսոսալ, ապրել ու տենչալ,

Լռել ու նստել, իրան մոռանալ

Եւ սիրոյ անյաղթ երազների մէջ,

Որպէս զոյգ թիթեռ իրար միանալ:

Սիրել բնութիւն, սիրել ծաղիկներ,

Սիրել կանաչներ, սիրել արօտներ

Եւ անյաղթ սիրոյ երազ անուրջում

Տխուր հեծեծալ, յիշել կարօտներ:

Չորակի միջին, աղբիւրի ափին

Ուր շաղ ու ցոլեր տալիս է արփին,

Յիշել ու խորհել սիրել ու խոկալ,

Սիրել ու մեռնել զետակի ափին:

Եւ թող սիրոյ դամբարանին

Սգւոր ուռին ողբ անի.

Եւ ձորակի զեփիւռ քամին

Ցաւս իր հետ թող տանի:

\* \*

Կէս գիշերին ծովը ելաւ,

Սմպերն եկան մթնեցին,

Չարագուշակ սև բուերը

Չորս բոլորս բռնեցին:

—Սիրուն տղայ, վեր կաց շուտով,

Եարդ քեզ է սպասում

Նա յիշում է վառ կարօտով,

Սիրտն է մեղմիկ տրոփում:

Ես վեր կացայ ընած տեղից  
Դէպ իմ հարը վաղեցի,  
Նրա վառվառն սրտի տակից  
Արիւնոտ վարդ քաղեցի:

Վարդը դրի կրծքիս վրայ  
Նա թառամեց, չորացաւ.  
Ա՛խ, գեղգեղուն սէրը նորա  
Օգը ցնդեց չքացաւ...

ԵԹԵՐՈՒՄ

Աղջամուղջի շողերի հետ  
Ես սլարկեցի անուրջում  
Ու ընկղմւած մտքերիս հետ,  
Ինձ կարծեցի երազում:

Վեր նայեցի, ամպն էր խաղում  
Որպէս կայտառ մի թիթեռ.  
Ըմրոստ հոգիս թռաւ վերև  
Որպէս խելառ մի ծիծեռ:

Ու երկնքի հպարտ արքան  
Տեսաւ հոգիս ճախրելիս  
Արիւնարբու սև արծիւը  
Յափշտակեց իմ հոգիս:




Անտահանված է 1957թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0345944



39632

Շուտով լոյս կը տեսնի հետզհետեւ

1) Աշուղը (լեգենդա)

2) Գեղջուկ (արձակ բանաստեղծութիւններ).

Գ Ի 6 6 է 7 կ ո պ է կ

Գումարով գնողներին 25% զեղջ. հեղինակի  
հասցէն՝ Ошаканъ чер. Аштаракъ Әрив. гүб.  
Мисакү Оганесяну.